ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ(CPI) ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

11.10.2021 20:53

Այսօր՝ 11.10.2021թ-ին, ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել էր Միջազգային Պաշտպանության Կենտրոն(CPI) միջազգային իրավապաշտպան կազմակերպության պատվիրակությանը, որը գլխավորում էր Կենտրոնի տնօրեն Կարիննա Մոսկալենկոն:

Կազմակերպության նպատակն է խթանել ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, Եվրոխորհրդի անդամ պետություններում դատահիրավական համակարգի կատարելագործմանը, մարդու իրավունքների պաշտպանության համաշխարհային կառուցվածքի կիրառությունը, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի պրակտիկան, ինչպես նաև գիտելիքների և փորձի տարածումն ու փոխանակումը:

Պատվիրակության անդամները Ռուսաստանի Դաշնության տարբեր երկրամասերի գործող փաստաբաններն էին, այդ թվում՝ Կրասնոդարի մարզի, Բաշկորտստանի Հանրապետության և Ուդմուրթական Հանրապետության փաստաբանների միությունների կառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում Պալատի նախագահ Սիմոն Բաբայանը համապարփակ ներկայացրել է Պալատի կառուցվածքը, գործառույթները, անդրադարձել է Պալատի կողմից փաստաբանների իրավունքների պաշտպանությանը, հանրային պաշտպանության որակի վերահսկողությանը, նրանց ծանրաբեռնվածությանը, գործերի բնույթին և պատվիրակությանը հետաքրքրող այլ ոլորտային հարցերի:

Հանդիպման մասնակիցներն ընդգծեցին նմանատիպ հանդիպումների կարևորությունը փորձի փոխանակման և արդյունավետ համագործակցության տեսանկյունից՝ պատրաստակամություն հայտնելով դրանց հաղորդել շարունակական բնույթ:

«Մենք բոլորս բավականաչափ ընկղմված ենք փաստաբանության մեջ և շատ բաներ հասկանում և զգում ենք առանց խոսքերի: Զգացվում է, որ ՀՀ փաստաբանները պայքարել և նվաճել են իրենց անկախությունն ու դիրքը պետության և հասարակության մեջ: Դուք կայացած համայնք եք», - իր խոսքում նշեց Միջազգային Պաշտպանության Կենտրոնի տնօրենԿարիննաՄոսկալենկոն:

Հանդիպման վերջում պատվիրակության անդամները շրջեցին Պալատի վարչական շենքում, ՀՀ փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում՝ անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային գործընթացին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })